

Համադրություն

Ներկայացնում ենք 02.04.2017-ին կայացած ՀՀ խորհրդարանական ընտրությունների և Արևելյան գործընկերության երկրներում անցկացված վերջին երկու համապետական ընտրությունների (Մոլդովայի նախագահական ընտրություններ 1-ին փուլ, 30.10.2016 և Վրաստանի խորհրդարանական ընտրություններ 1-ին փուլ, 08.10.2016) հաջորդ օրը Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության հրապարակած նախնական գնահատականների համադրությունը:

Համադրումը հնարավորինս արագ անցկացնելու նպատակով Մոլդովայի ընտրությունների վերաբերյալ զեկույցը ներկայացվում է առանց թարգմանության՝ ռուսերեն լեզվով, մյուս երկու զեկույցների դեպքում թարգմանությունը ոչ պաշտոնական է:

Մոլդովայի նախագահական ընտրություններ 1-ին փուլ, 30.10.2016 ¹	Վրաստանի խորհրդարանական ընտրություններ, 08.10.2016 ²	ՀՀ խորհրդարանական ընտրություններ, 02.04.2017 ³
ՆԱԽՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
<p>Первый тур первых за последние 20 лет прямых выборов Президента Молдовы предоставил гражданам полноценную возможность выразить предпочтения в отношении нового главы государства. Избирательная кампания, проходящая на фоне экономических трудностей и атмосферы недоверия к государственным институтам, была конкурентной, а основные свободы были соблюдены. Тем не менее, процесс был омрачен широко распространенным злоупотреблением административным ресурсом, недостаточной прозрачностью финансирования и несбалансированным освещением избирательной кампании в средствах массовой информации. Административные</p>	<p>Հոկտեմբերի 8-ի ընտրությունները մրցունակ էին, լավ կազմակերպված, և հիմնարար ազատությունները հիմնականում հարգվել են: Հանգիստ և բաց քարոզարշավի մթնոլորտի վրա, այնուամենայնիվ, ազդել են ապօրինի քարոզչության և բռնության որոշ դեպքերի մասին պնդումները: Ընտրությունների կազմակերպումը և ընտրողների ցուցակների կազմումը վստահություն են վայելել: ՋԼՄ-ները բազմակարծիք են եղել, բայց որոշ մշտադիտարկվող հեռարձակողներ քարոզարշավի լուսաբանման ընթացքում հավասարակշռություն չեն պահպանել: Բանավեճերն օգտակար հարթակ են տրամադրել մրցակիցներին իրենց տեսակետները ներկայացնելու համար: Քվեարկությունն ընթացել է կազմակերպված</p>	<p>Ապրիլի 2-ին անցկացված խորհրդարանական ընտրությունները լավ կազմակերպված էին, հիմնարար ազատությունները գլխավորապես հարգվել են: Չնայած իրավական շրջանակի ողջունված բարեփոխումներին և նոր տեխնոլոգիաների ներդրմանը, որոնք ուղղված էին նվազեցնելու ընտրական օրինախախտումների դեպքերը, ընտրությունները ստվերվել են ձայների գնման մասին վստահելի տեղեկատվությամբ և պետական ծառայողների ու մասնավոր կազմակերպությունների աշխատողների վրա ճնշումներով: Մա հանգեցրել է ընտրությունների հանդեպ հանրային վստահության ընդհանուր պակասի: Ընտրությունների օրն, ընդհանուր առմամբ, հանգիստ էր և խաղաղ, բայց նկատվել են</p>

¹ European Parliament, OSCE/ODHIR, OSCE PA, PACE report. (<http://www.osce.org/ru/odihr/elections/moldova/278216?download=true>)

² European Parliament, OSCE/ODHIR, OSCE PA, PACE, NATO PA report. (<http://www.osce.org/office-for-democratic-institutions-and-human-rights/elections/armenia/309156?download=true>)

³ European Parliament, OSCE/ODHIR, OSCE PA, PACE report. (<http://www.osce.org/office-for-democratic-institutions-and-human-rights/elections/armenia/309156?download=true>)

избирательные органы выполняли свои обязанности профессионально и прозрачно, при этом ход голосования и подсчета голосов получили преимущественно положительные оценки.

Законодательная база в целом предусматривает соответствующую основу для проведения демократических выборов. Во исполнение постановления Конституционного суда от 4 марта 2016 года, возвращающего прямые президентские выборы, в Кодекс о выборах были в срочном порядке внесены изменения и дополнения с целью обеспечения законодательной базы для проведения выборов. Тем не менее, **вопреки давней обеспокоенности ОБСЕ/БДИПЧ и Совета Европы, в законе продолжает присутствовать ряд пробелов и неясностей. В частности это касается сбора и проверки подписей в поддержку кандидатов, финансирования и проведения предвыборной агитации, эффективного разрешения избирательных споров, соблюдения положений о средствах массовой информации, а также положений, регулирующих проведение возможного второго тура выборов президента.**

Централизованный Государственный регистр избирателей в целом вызывает доверие общества. Избиратели могут быть внесены в дополнительные избирательные списки в день выборов при условии, что они предоставят удостоверяющие их личность документы. **Возникали вопросы относительно продолжающегося включения в списки избирателей большого количества граждан, проживающих за границей, но прописанных по прежним адресам, а также умерших лиц.** Общенациональная электронная система

եղանակով, բայց հաշվարկը գնահատվել է ավելի բացասական ընթացակարգային խնդիրների և աճող լարվածության պատճառով:

Ընտրական իրավական դաշտը նպաստում է ժողովրդավարական ընտրություններ անցկացմանը: Ընտրական օրենքի վերջին փոփոխություններն ազդել են ընտրական գործընթացների վրա: Վերջին իրավական փոփոխությունները հանգեցրել են նաև նոր ընտրական շրջանների սահմանների մշակմանը, որի նպատակն է հարգել հավասար ընտրական իրավունքի սկզբունքը, ինչպես նախկինում խորհուրդ է տրվել: Այնուամենայնիվ, որոշ շեղումներ դեռ առկա են, և փոփոխությունները բավարար պարամետրեր չեն ապահովել սահմանների գծման կամ հետագա դիտարկման համար ընթացակարգերի սահմանման համար:

Ընտրական մարմինները, որոնք գլխավորել է Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովը (ԿՀՀ), աշխատել են ժամանակին և պրոֆեսիոնալ կերպով, և ԿՀՀ-ն ընտրողների շրջանում բարձր մակարդակի վստահություն է վայելել: Ընտրական հանձնաժողովների անդամների կեսից ավելին նշանակվել են քաղաքական կուսակցությունների կողմից: Ողջ քարոզարշավի ընթացքում առկա են եղել մեղադրանքներ հանձնաժողովների կողմից հանձնաժողովների ավելի ցածր անդամների նշանակման հարցում անաչառության

կազմակերպչական խնդիրներ և ավելորդ միջամտություն գործընթացին, մեծամասամբ՝ կուսակցական ներկայացուցիչների կողմից:

Ընտրությունների իրավական շրջանակը համընդգրկուն է, բայց բարդ: Նոր ընտրական օրենսգիրքը հաստատվել է ավելի քիչ, քան ընտրություններից մեկ տարի առաջ բարեփոխումների գործընթացում, որը մեր գրուցակիցներից շատերը գնահատել են որպես տեսանելի և ներառական քայլ՝ ուղղված ընտրական գործընթացի նկատմամբ վստահության կառուցմանը: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը և ԵԽ Վենետիկի Հանձնաժողովը մի շարք խորհուրդներ են հնչեցրել, չնայած դեռ որոշ ոլորտներ հետագա ուշադրության կարիք ունեն: **Որոշ գրուցակիցներ քննադատել են նոր ընտրական համակարգի բարդությունը:** Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները չեն ստորագրել վերջնական տեքստը, քանի որ սահմանափակումներ են եղել քաղաքացի դիտարկների նկատմամբ:

ԿՀՀ-ն տեղավորվել է բոլոր իրավական վարջնաժամկետների մեջ և իր աշխատանքն իրականացրել է թափանցիկ կերպով՝ գործելով կոլեգիալ և արդյունավետ կերպով: ԿՀՀ-ն բարելավել է Տարածքային և Տեղական ընտրական հանձնաժողովների ընթացակարգերը և դիտարկների ու վստահված անձանց ուղեցույցները: Նրանք նաև մեծամասամբ ՀԿ-ների պահանջով հրապարակել են Ընտրական օրենսգրքի մի շարք հստակեցումներ և պրոակտիվ կերպով արձագանքել են խախտումներին: Որոշումներն ու

<p>проверки избирателей действовала на всех избирательных участках и обеспечила эффективную защиту от многократного голосования.</p>	<p>բացակայության հարցում, ինչը մասամբ պայմանավորված է եղել իրավական դաշտի խտրականությամբ:</p>	<p>օրակարգերը պարբերաբար հրապարակվել են ԿԸՀ պաշտոնական կայքում: Այնուամենայնիվ, ԿԸՀ-ն հետևողական չի եղել բողոքների նկատմամբ:</p> <p>Շատ գրուցակիցներ վստահություն են հայտնել ԿԸՀ գործունեության նկատմամբ: Հարցականի տակ է դրվել Տեղական ընտրական հանձնաժողովների անկողմնակալությունը՝ ի օգուտ իշխող կուսակցության ղեկավար պաշտոնների բաշխման պատճառով: ԿԸՀ կողմից ավելի ցածր մակարդակի հանձնաժողովների և ընտրողների համար կազմակերպված թրեյնինգները և ուսուցանող նյութերը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից ընդհանուր առմամբ դրական են գնահատվել, բայց տպագիր նյութերը միշտ չեն հասել իրենց թիրախային լսարանին:</p>
<p>Непоследовательные процессы проверки подписей, противоречиво установленные сроки и непропорциональные санкции за выборные нарушения поставили под сомнение право участия в выборах на равных условиях, что противоречит обязательствам ОБСЕ и стандартам Совета Европы.</p>	<p>Ընտրողների շրջանում աճել է վստահությունը ընտրական ցուցակների ճշգրտության վերաբերյալ: Ընտրական հանձնաժողովները ընտրողներին լայն հնարավորություններ են տվել ստուգելու ցուցակներում իրենց մասին տեղեկությունը: Օրենսդրական բարեփոխումները նյութապես են գրանցման ընթացակարգերը նախկինում ընտրական իրավունքից զրկված ընտրողների համար և բարելավվել են ընտրացուցակների համապարփակությունը, բայց շատ ուշ են կիրառվել լիովին արդյունավետ լինելու համար: 25 կուսակցություններ և դաշինքներ են գրանցվել համամասնական կարգով և 816 թեկնածուներ մեծամասնական ընտրակարգով:</p>	<p>Ընտրողների ցուցակների ճշգրտությունը բարելավվել է ընդլայնված միջինստիստոցիոնալ համագործակցության արդյունքում: Ընտրողների ցուցակը բաղկացած է եղել 2,654,195 ընտրողներից՝ ներառյալ զգալի թվով քվեարկողներ, որոնք երկրում չեն: Որոշ շահառուներ մտավախություն են հայտնել, որ ուրիշի անվան տակ քվեարկելու մասին կեղծ հայտարարությունների հիման վրա հարուցվել են քրեական գործեր: Չնայած օրենքն ապահովում է անհրաժեշտ մեխանիզմները, որպեսզի քվեարկողները ճշգրտումներ մտցնեն, քվեարկողների ցուցակները շարունակում են ներառել հասցեներ, որտեղ մեծ թվով քվեարկողներ են գրանցված, ինչը իշխանությունների կողմից հետագա գործողություններ է պահանջում:</p> <p>Քվեարկողների ինքնությունն ընտրությունների օրը նույնականացվել է Քվեարկողների ավտոմատացված սարքերի միջոցով (VADs), որը</p>

<p>Из 12 изначально зарегистрированных кандидатов было 5 женщин. Женщинами являются и председатель и заместитель председателя ЦИК. Женщины представлены достаточно хорошо в нижестоящих избирательных административных органах. Более трех четвертей членов комиссий на наблюдавшихся избирательных участках, и их председателей - женщины. В период избирательной кампании в СМИ были отмечены случаи гендерного стереотипного мышления и употребления сексистских формулировок.</p> <p>Избирательная кампания была конкурентоспособной и основополагающие свободы в целом были соблюдены. Несогласованность сроков регистрации кандидатов и начала предвыборной агитации отрицательно сказалось на равенстве предвыборных возможностей для участников.</p>	<p>Թեև ընտրողները կարող էին ընտրել մասնակիցների լայն շրջանակից, քաղաքական կուսակցությունների օրենսդրության փոփոխությունների ուշ կիրառումն ազդել է որոշ կուսակցությունների գրանցման և գրանցման գործընթացի համապարփակության վրա: Իրավասու կուսակցություններից 7-ը իրենց թեկնածուների ցուցակներում պահպանել են ոչ-պարտադիր բնույթ ունեցող գենդերային քվոտան և հավելյալ պետական ֆինանսավորման իրավունք են ստացել: 143 կին մեծամասնական թեկնածուներ են եղել:</p> <p>Քարոզարշավը մրցակցային և հիմնականում հանգիստ է եղել՝ չնայած բռնության եզակի միջադեպերին: Թեև հիմնարար ազատությունները հիմնականում հարգվել են և մասնակիցները կարողացել են ազատ քարոզարշավ իրականացնել, մի քանի կուսակցություններ մեղադրանքներ են</p>	<p>պարունակում է քվեարկողների ցանկերի էլեկտրոնային կրկնօրինակը: Քվեարկողների մատնահետքերը նույնպես սկանավորվել են, և ԿԸՀ-ն տեղեկացրել է մեզ, որ անցկացնելու է խաչաձև ստուգումներ՝ հնարավոր բողոքների դեպքում կրկնաքվեարկությունները բացահայտելու համար: Առաջին անգամ, Տեղական ընտրական հանձնաժողովների մոտ առկա քվեարկողների ստորագրություններով ցանկերի սկանավորված կրկնօրինակները հրապարակվելու են, որը բոլոր մեր գրուցակիցների կողմից գնահատվել է որպես կեղծումները զսպող կարևոր հանգամանք, չնայած որ քվեարկողների անձնական տվյալները պետք է հրապարակվեն:</p> <p>ԿԸՀ-ն գրանցել է 5 քաղաքական կուսակցությունների և 4 քաղաքական դաշինքների: Առաջին անգամ համակարգը փոքրամասնությունների համար ապահովում է 4 պահուստային տեղեր, ինչն է, որոշ կուսակցություններ ունեցել են դժվարություններ փոքրամասնությունները ներկայացնող թեկնածուներ գտնելու հետ կապված: Բոլորն իրականանացրել են այն պահանջը, որ յուրաքանչյուր չորս թեկնածուներից մեկը պետք է կին լինի, այսինքն՝ ըդհանուր 1,558 թեկնածուների 30%-ը կանայք էին: Դրական զարգացում է և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի նախորդ առաջարկություններին համապատասխան է այն, որ գենդերային քվոտան վերաբերում է նաև ձեռք բերված և թափուր տեղերի բաշխմանը:</p> <p>Պաշտոնական քարոզարշավը սկսել է մարտի 5-ին և վերջացել է ապրիլի 1-ին: Քարոզարշավը մեկնարկել է դանդաղ և ակտիվացել է ընտրության օրվա մոտանալուն զուգահեռ: Քարոզարշավերի մեծ մասի ժամանակ շեշտը դրվել է ավելի շատ անհատ թեկնածուների, քան կուսակցությունների</p>
--	---	--

Были отмечены многочисленные случаи злоупотребления административного ресурса участниками, занимающими выборные должности, включая давление на государственных служащих и других избирателей во время сбора подписей в поддержку кандидатов и проведения предвыборных мероприятий. Это размыло грань между государственной деятельностью и деятельностью политических партий, что противоречит обязательствам в рамках ОБСЕ и стандартам Совета Европы.

հնչեցրել թեկնածուների և նախընտրական շտաբի նկատմամբ քաղաքական ճնշումների մասին: Երկու առաջատար կուսակցությունների միջև քարոզարշավի տոնը առճակատող էր և ազդել է ընտրական մթնոլորտի վրա: Քարոզարշավի հարցերը ընդգրկել են գործադրությունը, տնտեսությունը, ենթակառուցվածքների զարգացումը և սոցիալական անվտանգությունը, ինչպես նաև հսկողության ձայնագրությունների հրապարակումը: Եղել են ապօրինի քարոզչության և վարչական ռեսուրսի չարաշահման միջադեպեր: Քարոզարշավի ֆինանսավորման կանոնակարգերի բարեփոխումները միայն մասամբ են բավարարել Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (GRECO) առաջարկությունները ավելի միանման իրավական դաշտի և խախտումների համար ավելի համաչափ և զսպող պատժամիջոցների հարցում: Ընտրությունների դիտարկման միջազգային առաքելության համար պատասխանատու Պետական աուդիտի գրասենյակը (SAO) հետաքննել է 694 նվիրատվություն և պատժամիջոցներ է սահմանել 7 նվիրատուի նկատմամբ: Մասամբ նոր ընթացակարգերի պատճառով, որոնք SAO-ից պահանջում են ստանալ դատարանի թույլտվությունը հետաքննություն սկսելու համար, քարոզարշավի ֆինանսական խախտումներին արձագանքը չի եղել ժամանակին՝ վնասելով SAO-ի վերահսկողության արդյունավետությանը: Միջոցների չափի զգալի անհավասարակշռություն է եղել:

քաղաքականության վրա: Մասնակիցները հիմնականում կարողացել են առանց սահմանափակումների իրականացնել քարոզարշավ, սակայն երկրի որոշ մասերում առանձին բռնությունների դեպքեր են արձանագրվել: Դրական է, որ իշխանության շատ ներկայացուցիչներ մեկնել են արձակուրդ՝ քարոզչություն իրականացնելու նպատակով: Մակայն, վստահելի տեղեկատվություն է ստացվել ընտրակաշառքի, պետական ծառայողների, այդ թվում՝ դպրոցների և հիվանդանոցների աշխատակիցների վրա ճնշումների և ինչ-որ կուսակցության օգտին քվեարկելու համար ընտրողներին ահաբեկելու վերաբերյալ: Մա նպաստել է ընտրական գործընթացի նկատմամբ ընդհանուր հանրային վստահության պակասին: Որոշ իրավական դրույթներ նախընտրական քարոզչության հաշվետվությունների և վերահսկողության հետ կապված ուժեղացվել են, ինչն էլ այսպես կոչված կազմակերպչական ծախսերը, ինչպիսիք են, նախընտրական շտաբների, տրանսպորտի և կապի հետ առնչվող ծախսերի մասին հաշվետվությունը, բացակայում են, ինչը նվազեցնում է թափանցիկությունը: Նախքան ընտրությունների օրը, բոլոր մասնակիցները զեկույցներ են ներկայացվել քարոզարշավի եկամուտների և ծախսերի վերաբերյալ ԿԸՀ-ի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն, որոնք հրապարակվել են օնլայն: Թեև քարոզարշավի ֆինանսավորման հետ կապված վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը որևէ խախտում չի արձանագրել՝ այն ակտիվորեն չի ուսումնասիրել զեկույցների ճշգրտությունը: Խոսքի ազատությունը երաշխավորվում է Մահմանադրությամբ և մեծամասամբ իրականացվում է:

Органы СМИ тесно связаны с ведущими

политическими партиями, а концентрация собственности сокращает политический плюрализм на телевидении. Результаты мониторинга СМИ, проведенного Миссией по наблюдению за выборами ОБСЕ/БДИПЧ (МНВ), так же как мониторинг регулирующих органов, обнаружили **явную политическую предвзятость ведущих телевизионных каналов в ходе освещения предвыборного процесса. Несоблюдение обязательств по справедливому, сбалансированному и беспристрастному освещению предвыборной кампании,** воспрепятствовало созданию равных условий для участия в выборах.

Информационные и агитационные материалы для избирателей, так же как избирательный бюллетень были общедоступны на государственном и русском языке. **У собеседников ОБСЕ/БДИПЧ не возникло опасений относительно участия национальных меньшинств в выборах.** В ходе предвыборной кампании вопросы языка или идентичности заметно не поднимались.

Жалобы и апелляционные обращения в целом были рассмотрены в открытой манере с соблюдением законодательных сроков. Тем не менее, **противоречивое толкование законов в части исключения кандидатов из предвыборного процесса понизило уровень всеобщего доверия в отношении беспристрастности избирательных административных и правозащитных органов.**

ԶԼՄ-ների մասին օրենսդրությունը ամուր հիմք է ապահովում ԶԼՄ-ների ազատության համար: ԶԼՄ ծածկույթի համատարած բազմակարծությունը բարելավվել է: ԶԼՄ-ները ընկալվում են որպես բևեռացված: Վրաստանի հաղորդակցության հանձնաժողովը ամբողջությամբ չի բավահայտել իր մշտադիտարկման արդյունքները և ժամանակին ու արդյունավետ կերպով չի արձագանքել հայտնաբերված խախտումներին: OSCE/ODIHR ԸԴԱ-ի լրատվամիջոցների մշտադիտարկումը ցույց է տվել, որ մշտադիտարկվող հեռարձակողները հարգել են անվճար և վճարովի գովազդի մասին իրավական դրույթները, բայց չեն պահպանել հասարակական կարծիքի հարցումների հրապարակման մասին օրենքը: Բանավեճերը ներառական և բազմակողմանի հարթակ են տրամադրել մասնակիցներին ներկայացնելու իրենց տեսակետները, բայց որոշ մշտադիտարկված հեռարձակողներ կողմնակալ են եղել իրենց նորություններում կամ ընթացիկ ծրագրերում:

Ընտրական օրենսգիրքը սահմանում է ընտրական հանձնաժողովի որոշումների բողոքարկման վեճերի լուծման գործընթաց, բայց սահմանափակում է ընտրողի բողոքարկման իրավունքը, ինչը հակասում է միջազգային պարտավորություններին: Ընտրական հարձնաժողովներն ու դատարանները քարոզարշավի ընթացքում 187 բողոք են ստացել, և թափանցիկ կերպով դիտարկել են դրանք՝ տեղեկացնելով կողմերին լուումների մասին: Ընտրախախտումների դեմ վարչական միջոցներ ձեռնարկելու համար արագացված վերջնաժամկետի բացակայությունը և հետաքննությունների համար ռեսուրսների անբավարարությունը սահմանափակում են այս միջոցի արդյունավետությունը: Ընտրական գործընթացի բազմաթիվ մասնակիցներ նշում են

Այնուամենայնիվ, հեռարձակվող ԶԼՄ-ների ազատությունը սահմանափակվում է խմբագրական ինքնուրույնությանը սեփականատերերի միջամտությամբ: Մա հանգեցնում է լրագրողների ինքնագրաքննության և կառավարության մասին քննադատական նյութեր պատրաստելուց խուսափելու: Լրագրողները հայտարարել են, որ բռնության վերջին դեպքերը և դրանց դատական հետապնդման բացակայությունը խոչընդոտում են լրագրողների աշխատանքը և խաթարում նրանց անվտանգությունը:

Չկա որևէ միջամտություն ինտերնետ ազատությանը և օնլայն լրատվական աղբյուրները նպաստում են լրատվամիջոցներում քաղաքական բազմակարծության աճին: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի՝ լրատվամիջոցների մոնիտորինգը քարոզարշավի ընթացքում ցույց տվեց, որ Հ1 հեռուստատարիքը իր լրատվական թողարկումներում հավասարապես լուսաբանել է յուրաքանչյուր մասնակցի:

Մեր գրուցակիցներից շատերը նշել են, որ հասարակությունը շարունակում է ընտրախախտումների մասին չհայտնել բողոքների հետ կապված դատավճիռների կայացման համակարգի արդյունավետության հետ կապված վստահության պակասի պատճառով: Դատական համակարգի, ընտրական վարչարարության և իրավապահ մարմինների անկախության պակասը և այն ձևը, որով նրանք զբաղվում են բողոքներով, խարխիլել են իրավական պաշտպանության արդյունավետությունը և հակասում են ԵԱՀԿ պարտավորություններին և Եվրոպայի Խորհրդի չափանիշներին:

<p>Осуществление наблюдения международными и гражданскими организациями, а также представителями кандидатов предусмотрено законом. На эти выборы было утверждено более 3700 гражданских и международных наблюдателей, у которых была возможность беспрепятственно проводить свои мероприятия.</p> <p>В целом процедура голосования в день первого тура выборов проходила весьма упорядоченно и спокойно. Голосование было оценено</p>	<p>դատական համակարգում բարեփոխումները շարունակելու անհրաժեշտությունը:</p> <p>Ազգային փոքրամասնությունների թեկնածուներն առաջադրվել են մի քանի կուսակցությունների և դաշինքների ցուցակներով, բայց քչերն են առաջադրվել անցողիկ տեղերում, և մեծամասնական ընտրակարգով ազգային փոքրամասնությունների բնակեցված շրջաններում: Այս շրջաններում քարոզարշավն իրականացվել է ազատ և մրցունակ միջավայրում: Դա ավելի ակնհայտ էր ադրբեջանական շրջաններում և ավելի զսպված էր հայկական շրջաններում: Մտահոգություններ են հնչել, որ ընտրական շրջանների միջև նոր սահմանները կարող են նվազեցնել ազգային փոքրամասնությունների ներկայացվածության հնարավորությունը:</p> <p>ԿԸՀ-ն հավատարմագրել է 55 միջազգային և 111 քաղաքացիական դիտորդական կազմակերպություններ: Բազմաթիվ քաղաքացիական դիտորդական կազմակերպությունների մասնակցությունը ընտրական գործընթացի բոլոր փուլերում նպաստել է ընտրությունների թափանցիկությանը:</p> <p>Ընտրության օրը հիմնականում անցել է կազմակերպված ձևով, բայց լարվածությունն աճել</p>	<p>Միջազգային և քաղաքացիական դիտորդությունը թույլատրվել է և կուսակցությունների վստահված անձինք իրավասու են ներկա լինել ընտրատեղամասերում: ԿԸՀ-ն հավատարմագրել է ընդհանուր առմամբ 28,021 քաղաքացիական դիտորդների, բայց ՁԼՄ-ներն ու քաղաքացիական հասարակությունը քննադատել են մի շարք քաղաքացիական դիտորդների և ՁԼՄ-ների ներկայացուցիչների ներկայությունը ընտրատեղամասերում ընտրողաբար սահմանափակելու իրավական հնարավորությունները: Բացի այդ, միջազգային ՀԿ-ներին մերժել են դիտորդական առաքելություն իրականացնել ընտրություններին, ինչը հակասում է ԵԱՀԿ պարտավորություններին.</p> <p>Ընտրությունների օրն անցել է հանգիստ և խաղաղ: Քվեարկության ընթացակարգերը ընդհանուր</p>
--	---	--

<p>положительно при соблюдении основных процедур. Оценка подсчета голосов была менее позитивной, главным образом по причине нарушения процедур. Процесс подведения итогов выборов проходил быстро и прозрачно, однако, несоответствующее условия для подведения итогов в некоторых окружных избирательных советах (ОИС) привели к некоторым проблемам.</p> <p>Практически на всех наблюдавшихся избирательных участках и ОИС у представителей кандидатов и наблюдателей была возможность отслеживать все этапы голосования, подсчета голосов и подведения итогов без ограничений. Предварительные результаты с избирательных участков были обнародованы на вебсайте ЦИК, что способствовало повышению степени прозрачности.</p>	<p>Է օրվա ընթացքում և մի քանի վեճեր են գրանցվել ընտրատեղամասերում և դրանց հարակից վայրերում: Քվեարկությունը դրական է գնահատվում գրեթե բոլոր ընտրատեղամասերում: Քիչ թվով ընտրատեղամասերում է գործընթացը բացասական գնահատվել, ինչը մեծամասամբ Տեղամասային ընտրական հանձնաժողովների աշխատանքին կողմնակի անձանց միջամտության արդյունքն է եղել: Հաշվարկը վատ է գնահատվել ընթացակարգային խնդիրների և աճող լարվածության պատճառով: Քաղաքացիական դիտորդների և կուսակցությունների ներկայացուցիչների էական քանակը բարձրացրել է թափանցիկությունը, բայց հանգեցրել է մարդկանց կուտակումների և հանձնաժողովների աշխատանքին հաճախակի միջամտությանը:</p>	<p>առմամբ պահպանվել են և քվեարկողների ավտոմատացված սարքերի միջոցով (VADs) գործել են արդյունավետ: Սակայն, քվեարկության ընթացքում եղել են կուտակումներ, երկար հերթեր և կուսակցությունների ներկայացուցիչների ու ոստիկանության կողմից միջամտություններ: Մարդկանց բազմությանը թույլատրվում էր հավաքվել ընտրատեղամասերից դուրս, ինչը հակասում է օրենքին:</p> <p>Արված դիտարկումների 35% -ի դեպքում ընտրողները դժվարություններ ունեցան հասկանալու քվեարկության գործընթացը: Արձանագրվել են նաև խմբակային քվեարկության և ընտրողների վրա ազդելու փորձեր: Քվեների հաշվարկը իրականացվել է թափանցիկ ձևով, բայց բացասաբար է գնահատվել շատ դեպքերում, ինչը հիմնականում պայմանավորված է կուսակցությունների ներկայացուցիչների միջամտությամբ, ինչպես նաև ընթացակարգային որոշ բացթողումներով: Դիտորդները արդյունքների ամփոփման գործընթացը գնահատել են դրական 38-ից 33 ընտրատեղամասերում: Չնայած որոշ կուտակումների՝ ընտրատեղամասերում արդյունքների արձանագրությունների կազմումը ընդհանուր առմամբ եղել է լավ կազմակերպված:</p>
---	--	--